...իրատում:

ԼՂԻՄ. ԿԱՆՍԱ՞Ն, ԱՐԴՅՈՔ, ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԻՆ

Կանսա՞ն, արդյոք, ճշմարտության ձայնին: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հերթական նստաշրջանի բացման օրը Արցախի համար բախտորոշ այս հարցն է տալիս Լեռնային Ղարաբաղի ամեն մի հայ:

ԽՄԿԿ Կենտկոմի ազգային հարցին նվիրված պլենումի որոշումները, ցավոք, չարդարացրին ինքնավար մարզի բնակչության ճնշող մեծամասնության հույսերը: Դրանք, ինչպես այստեղ գտնում են մարդիկ, այդպես էլ չպարզեցին արյունաթոր պրոբլեմին արդարացի մոտեցում ցույց տալու հեռանկարները: Ադրբեջանական ԽՍՀ-ի հետ փոխըմբռնման ուղիները նույնպես խիստ սահմանափակ են, և դա համոզիչ կերպով ցույց տվեց հարևան հանրապետության Գերագույն խորհրդի վերջին նստաշրջանը: Հռետորները խոսք անգամ չասացին այն մասին, թե ինչպիսի ծայրահեղ դժվարին պայմաններում են ապրում Լեռնային Ղարաբաղի հայերը, իրենց ուշադրությունը բևեռելով միայն ինքնավար մարզի ադրբեջանցի բնակչության իբր աղետալի վիճակի վրա: Ավելին, մի շարք դեպուտատների ելույթներում այն միտքն էր հայտնվում, թե անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել փոխելու ԼՂԻՄ-ի ժողովրդագրական իրավիճակը, ինչպես նաև վերացնելու մարզի սահմանակից և առավելապես հայաբնակ Շահումյանի (գյուղական) շրջանը: Երկրամասի առ այսօր շարունակվող շրջափակումը մի ավելորդ անգամ հաստատում է, որ ադրբեջանական կողմի խոսքը գործից ներկայումս չի տարբերվում: Մինչև ե՞րբ պետք է ոտնահարվեն հայկական ինքնավար կազմավորման իրավունքները: Այս հարցին կկարողանա՞ արդյոք պատասխանել երկրի Գերագույն խորհրդի նստաշրջանը: Ժամանակը ցույց կտա:

Մինչդեռ ուժգնանում․ լարվածությունը չի թուլանում:

Ճանապարհներին շարունակվում է «քարային պատերազմը»: Այսպես, Ստեփանակերտից ոչ հեռու ընկած Մալիբեկլի գյուղի մոտ ադրբեջանցիները քարկոծել են Մարտունու շրջանի գինու գործարանին պատկանող «Կամազ» ավտոմեքենան: Մարտակերտի շրջանում, Բաշգյունեփայա գյուղի մոտ անտառազանգվածից հարձակվում է կատարվել մարզային կենտրոն ուղևորվող հինգ հայկական մեքենաների վրա: Ջարդվել են ապակիները, տուժածներ չկան: Այդ նույն շրջանում ճանապարհատրանսպորտային պատահար է տեղի ունեցել: Ասկերանի շրջանի Հասանաբադ գյուղում վեճի հողի վրա ծեծկռտուք է տեղի ունեցել հայերի և ադրբեջանցիների խմբերի միջև: Ազգամիջյան հողի վրա նաև այլ կոնֆլիկտներ են տեղի ունեցել:

Ուղղաթիռներով շարունակվում է պարենամթերքի առաքումը Ստեփանակերտ: Սեպտեմբերի 1-ից առ այսօր քաղաք են փոխադրվել ավելի քան 250 տոննա ալյուր, կենսականորեն կարևոր բազմաթիվ բեռներ:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ